# ԾԻԱԾԱՆԻ ՍԵՐՄԻ ԿԱՆՉԸ



633
Ծ-64

14 MAY 2013

ԽՍՀՄ ՄԱՏԺՈՂԿՈՄԱՏ

ԾԽԱԽՈՏԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԽԱԽՈՏԻ ՓՈՐՁԱԿԱՅԱՆ

# ԾԽԱԽՈՏԻ ՍԵՐՄԻ ՑԱՆՔԸ

ՅԵՎ

# ՇԻԹԻԼՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ

ԹԵՐԹԻԿ №3

633
Ծ-64

1933 ՅԵՐԵՎԱՆ

633
Ծ-64 ազդ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ — ԵՐԵՎԱՆ

Գլավլիտ 8435 (բ) Պատվեր 895 Տիրաժ 1000

# ԾԱՎԱԼՈՒՆ ՖՐՈՆՏՈՎ ԴԵՊԻ ԾԽԱԽՈՏԻ ՑԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Ծխախոտն ամենից շատ ջերմություն պահանջող կուլտուրաներից մեկն է: Մեր ծխախոտագործական շրջաններում մշակվող ծխախոտի տեսակն իր լիակատար զարգացման համար պահանջում է մինչև 3—5 տաք ամիս, հաշված չիթիլը դաշտ փոխադրելու ժամանակից: Դրա համար էլ ծխախոտի տնկման աշխատանքն այնպիսի ժամանակ պետք կատարել, վոր հնարավոր լինի օգտագործել ամառվա ամենատաք ու չոր յեղանակները, մանավանդ նրա տերևները չորացնելու համար: Այդ պատճառով էլ մեզ մոտ ընդունված է ծխախոտը մշակել չիթիլման միջոցով, վոր վաղօրոք աճեցվում է ջերմոցներում, վորպեսզի այդպիսով կարելի լինի ժամանակ շահել և աշնան տաք յեղանակներին չորացնել տերևները: Դրա համար էլ նախօրոք պատրաստելով չիթիլանոցները և բոլոր անհրաժեշտ նյութերը՝ չպետք է ժամանակ կորցնել, այլ շուտով պետք սկսել սերմի ցանքը, վորպեսզի տաք յեղանակներն սկսվելուն պես պատրաստի չիթիլ լինի դաշտ փոխադրելու համար:

Մեր պայմաններում ծխախոտի չիթիլը տնկելու ամենալավ ժամանակը համարվում է մայիս ամիսը: Չիթիլների հասունացման համար պահանջվում է տաք ջերմոցներում մինչև 50 օր, իսկ սառը՝ 60 օր: Հետևապես, ժամանակին պատրաստի չիթիլ ունենալու համար անհրաժեշտ է սերմը ցանել մարտի առաջին կեսին:

Վորպես կանոն ջերմոցներում սերմն ավելի շուտ է ցանվում, քան մարգերում, վորովհետև ջերմոցներում նորածիլ ծխախոտն ավելի լավ է պաշտպանվում անբարենպաստ յեղանակի — գլխավորապես ցրտերի ազդեցությունից: Ջերմոցներում սերմը ցանելու ամենալավ ժամանակը համարվում է փետրվարի վերջը և մարտի սկիզբը, սակայն Հայաստանում, ուր ցուրտ գարունն ավելի յերկար է տևում, ավելի լավ է ցանքը կատարել մարտի 10-ից:

Ցուրտ մարգերի մեջ ծխախոտի սերմը ցանելու ամենահարմար ժամանակը պետք համարել մարտի յերկրորդ կեսից — ապրիլի սկիզբը, սակայն վոչ մի դեպքում վոչ ուշ ապրիլի 15-ից, նկատի ունենալով, վոր ապրիլին ցանվածից ստացված չիթիլը պետք գործադրվի վերջին տնկման համար:

Մեկ քառ. մետր հրջանակավոր ջերմոցում ցանք կատարելու համար անհրաժեշտ է ունենալ 0,8 գր. սերմ, իսկ մարգի համար՝ 1,1 գրամ: Այսքան սերմացուն միանգամայն բավական է անհրաժեշտ քանակի չիթիլ ստանալու համար և վոչ մի դեպքում այդ նորմաները չպետք ավելացնել, վորովհետև խիտ ցանքի դեպքում ստացվում են յերկար, չափազանց նուրբ ու թույլ արմատներով չիթիլներ և այդպիսի չիթիլները դաշտ փոխադրելուց նրանց մեծ մասը փչանում է, իսկ վողջ մնացածներն էլ շատ դանդաղ են աճում ու մեծանում: Չափից ավելի նոսր ցանելու դեպքում էլ ստացվում են չափազանց կարճ և խոշոր տերևներով չիթիլներ, վորոնց դաշտում տնկելու գործն էլ բավականին դժվարանում է:

Վերոհիշյալ նորմայով սերմը միանգամայն բավական է ցանքի համար, յեթե այդ սերմացուն լավ ծլունակություն ունի:

Լավ ծլունակություն է համարվում, յեթե սերմացուն 85 տոկոս ծլունակ է, այսինքն՝ 100 հատիկ սերմից 85-ը ծլում է: Յեթե ծլունակությունն ավելի ցածր տոկոս է կազմում, վերցվում է ավելի մեծ նորմայով սերմացու:

Ծխախոտի արդյունաբերության Համամիութենական Ինստիտուտի (ԾԱՀԻ) կողմից տարածված սերմացուն ստուգված է և ունի 90—95 տոկոս ծլունակություն, ուստի այդ սերմացուն համարվում է միանգամայն վստահելի:

Ծխախոտի սերմը ցանվում է չոր դրությամբ կամ թե թրջած-ծլեցրած:

Սերմը չոր վիճակում ցանելը փորձի տեսակետից ավելի լավ է, քան թրջված ցանելը: Չոր ցանված սերմի ծիլերը հիվանդություններին ու անբարենպաստ պայմաններին ավելի լավ է դիմանում, քան թրջված սերմացվից առաջացածը: Սակայն չոր դրությամբ սերմը ցանելու թերությունն էլ այն է, որ ավելի ուշ է ծլում (10—12 օրով), ուստի մինչև նրանց դուրս գալն արդեն մոլախոտը բուսած է լինում և հենց առաջին քաղհանին նորածիլ բողբոջները բավականին վնասվում են:

Թրջված-ծլեցրած սերմացու ցանելու միջոցին դիմում են այն դեպքերում, յերբ որևէ պատճառով ժամանակին ցանք չի կատարվել, ուստի անհրաժեշտ է շտապեցնել սերմի ծլման պրոցեսը:

Թրջված-ծլեցրած սերմացու ցանելու դեպքում ծիլերը դուրս են գալիս 5—7-րդ օրը: Թրջված-ծլեցրած սերմացուն բուսնում է համաչափ և կանխում է մոլախոտերին, որի շնորհիվ առաջին քաղհանը բավականին հեշտանում է:

Սերմի ծլեցումը կատարվում է այսպես. քաթանից կարում են փոքրիկ տոպրակներ, այնպես, որ յուրաքանչյուրի մեջ 100—150 գրամ սերմացու տեղավորվի: Մի տոպրակի մեջ դրանից ավելի չպիտի ծլեցնել, որովհետև սերմին անհրաժեշտ օդը քիչ կլինի, բացի այդ, հատիկներն ուժեղ կճնշեն իրար և կոտրեն ծիլերը:

Սերմացուն մի քանի անգամ լավ լվանում են, լցնում տոպրակներն ու բերանները կապում, բայց այնպես, որ սերմացուն տոպրակի մեջ շատ սղմված չլինի: Այդ դրությամբ տոպրակները դնում են տաք, բայց ոչ կեծ ջրի մեջ ու այդպես թողնում ամբողջ 12 ժամ: Այնուհետև թրջված սերմացուն լվացվում է՝ վրան լցնելով մաքուր ջուր այնքան, մինչև որ տոպրակի տակից թափվող ջուրը բոլորովին պարզի: Ապա քամում են ամբողջ ջուրը, սերմը խառնում, փռելով ավելի շատ ու մանր նրա մեջ և տեղավորում են մի սենյակում, դարակների վրա, այնպիսի սենյակում, ուր շարունակ 25—30 աստիճան Ցելսիուսի ջերմություն կա: Տոպրակների վրայից էլ մի բան են ծածկում, որպեսզի սերմը լավ չչորանա: Շատ օգտակար է, որ սերմացուն ծլելու ժամանակ շարունակ նույն ջերմության մեջ գտնվի: Հարկավոր է, որ օրական մեկ անգամ, որինակ՝ գիշերը ջերմաստիճանն իջնի 6—7 աստիճանով: Այդ դեպքում սերմացվի ծլունակության տոկոսը բարձրանում է: Այնուհետև ամեն օր պետք է նայել սերմացվին և օրական մեկ անգամ թրջել, ավելի ճիշտ՝ լվանալ ու քամել ավելորդ ջուրը, ինչպես վերն ասվեց:

Սերմը ծլելու պիտի թողնել մինչև այն ժամանակ, յերբ նրա վրա կերևան փոքրիկ, սպիտակ ծիլիկներ: Յեթե ավելի շատ թողնվի, ապա ծիլերը կերկարեն և ցանելու ժամանակ կկտրվեն կամ կկպչեն իրար և կդժվարացնեն կանոնավոր ցանքը:

Ծլեցնելու ժամանակ զգույշ պիտի լինել, որ տարբեր տեսակների սերմերը չխառնվեն իրար:

Ցանելուց առաջ ջերմոցի կամ մարգի մակերևույթը խնամքով հավասարեցվում է և ամրացվում տախտակի կամ պնդոցի (տրամբովկա) միջոցով: Ապա, յեթե ծլեցրած սերմացու յե ցանվում, մարգերի ու ջերմոցների յերեսին ջուր է ցանվում, խոնավացվում: Չոր սերմ ցանելու դեպքում կարելի յե և ջուր չցանել:



Վերջինիս, ցանվելիք տարածության հետ համեմատած, ցանվող սերմի քանակը չափազանց փոքր է լինում և դժվար է հավասարաչափ ու համաչափ ցանել, դրա համար էլ ցանելուց առաջ սերմացուն խառնում են հողի, մաղած գոմաղբի կամ մոխրի հետ: Ցանքը պիտի հաշվով կատարել, որ առաջուց չափված սերմացվի ամբողջ քանակությունը հավասարաչափ բաժանվի յուրաքանչյուր միավոր հողամասի վրա:

Ջերմոցում ցանելիս նախ պետք է ջերմոցը յերկարությամբ յերկու մասի բաժանել և ամեն մի մասը ցանել առանձին:

Մարգեր ցանելիս կարիք չկա մարգը յերկու մասի բաժանելու, այլ պիտի ցանել միանգամից ամբողջ լայնությամբ, որովհետև մարգի լայնությունը (1 մետր) անհամեմատ ավելի փոքր է ջերմոցի լայնությունից, որ յերկու մետր է լինում:

Ծխախոտի սերմը ցանելն ամենապատասխանատու աշխատանքներից մեկն է, ուստի այդ գործը պետք է հանձնարարել փորձված ծխախոտագործի: Ցանելիս անհրաժեշտ է հետևել, որ համաչափ ցանք ստացվի, հակառակ դեպքում կարող է փչանալ ամբողջ գործը:

Սերմը ցանելուց հետո ջերմոցի ու մարգի վրա շաղ է տրվում մաղված փթվածքախառնուրդ, կամ միայն հին գոմաղբ, որ առաջուց պիտի պատրաստված լինի այն ձևով, ինչպես ասվել է նախորդ թերթիկներում: Սերմը ծածկող այդ շերտի հաստությունը 3—4 սանտիմետրից ավելի չպիտի լինի, թե չէ՝ ծիլը չի կարող հողի յերեսը դուրս գալ: Ավելի բարակ շերտը նույնպես ձեռնտու չէ, որովհետև ջրելուց սերմերը կարող են բացվել: Այս բոլորից հետո ջերմոցներն ու մարգերը խնամքով պնդացվում են տախտակով կամ պնդիչով, ապա ջրվում են մանրածակոտ ցնցուղով, որից հետո ծածկվում են ծածկոցներով, խսիրներով, կամ ինչ որ պատրաստված է այդ նպատակով:

Ջրելիս պետք է զգույշ լինել, որ մարգերի յերեսին լճակներ չառաջանան, թե չէ՝ սերմերը դուրս կընկնեն հողից և կստացվի անհամաչափ ցանք: Հետագայում էլ ջրելու ժամանակ նույնպես զգույշ պիտի լինել:

# ԾԽԱԽՈՏԻ ՇԻԹԻԼԻ ԽՆԱՄՔԸ

Ծխախոտի կուլտուրայի մշակության ամենադժվար աշխատանքներից մեկը շիթիլներ աճեցնելն է: Ծխախոտի մշակության վերջնական արդյունքն ամբողջապես կախված է նրանից, թե այս կամ այն տնտեսությունն ինչ չափով է կարողացել ճիշտ կազմակերպել իր շիթիլանոցի աշխատանքը և ապահովել իրեն ժամանակին հասունացած ու անհրաժեշտ քանակով շիթիլներով:

Այս պատճառով էլ գարնան ընթացքում ծխախոտագործական կոլտնտեսությունների ուշադրությունը պիտի կենտրոնացվի նաև ծխախոտի շիթիլանոցների աշխատանքների վրա:

Շիթիլանոցների խնամքի ընթացքում անհրաժեշտ է մեծ ուշադրությամբ հետևել, վոր կանոնավոր լինեն՝ 1) ջրելու գործը, 2) քաղհանը, 3) ստվերավորելը, 4) հող ցանելը, 5) պարարտացուցիչ ջրումը և 6) պայքարը հիվանդությունների ու վնասատուների դեմ:

**1. Ջրելը.**—Ցանքից անմիջապես հետո ջրելու գործողությունը պիտի կատարել մեծ զգուշությամբ, վորովհետև, քանի դեռ սերմը չի ծլել ու չի արմատակալել, ջրելուց կարող է բացվել, հողի յերեսը դուրս գալ ու փչանալ: Զգուշությունն անհրաժեշտ է նաև այն պատճառով, վոր վատ ջրելը նպաստում է հիվանդություններ առաջանալուն:

Ջրելու գործը կանոնավոր լինելու համար ուշադրությամբ պիտի հետևել ջերմոցի ու մարգի վոչ միայն մակերեսի խոնավությանը, այլև պետք է հետևել, թե ինչ աստիճանի յե խոնավ շիթիլի տակ յեղած հողի շերտը: Հողի այդ շերտը վոչ շատ չոր պիտի լինի, վոչ էլ շատ խոնավ, այլ պիտի լինի խոնավանման: Յեթե շիթիլանոցը շինված է կավահողի վրա, ապա շատ ջրելուց նա կցեխանա, ջուրը դժվարությամբ անց կկացնի, իսկ դրանից կարող են հիվանդություններ առաջանալ: Յերբ շիթիլը դեռ շատ փոքր է կամ նոր է միայն դուրս գալիս, պետք է ավելի քիչ ջրել և այն էլ ամենամանրածակոտի մաղով: Շոգ որերին ավելի պիտի ջրել: Վաղ գարնանը, յերբ դեռ յեղանակը ցուրտ է, ավելի լավ է ջրել ցերեկը, վորպեսզի ջերմոցը շատ չցրտի: Տաք յեղանակին ավելի լավ է յերեկոյան ջրել, վորովհետև այդ ժամանակ հողն ավելի լավ է ջուր ծծում: Կարելի յե ջրել նաև որվա շոգ ժամանակ, յեթե միայն ջրելուց առաջ շիթիլին ստվեր արվի:

Շիթիլանոցը ջրելու համար ամենալավ ջուրը գետի ջուրն է և անձրևաջուրը, իսկ ջրհորի ու աղբյուրի ջուրն այնքան էլ լավ չէ:

Շիթիլի աճման սկզբնական շրջանում ջուր տրվում է որական 2 անգամ—առավոտյան և իրիկնապահին: Յերեկոյան ջրելը շատ չպիտի ուշացնել, վորպեսզի գիշերը շիթիլները թաց չլինեն: Հետագայում, յերբ արդեն շիթիլներն ամրացել են, ավելի լավ է ջրել մեկ անգամ, բայց լավ ջրել, այն էլ իրիկնապահին: Կամ նույնիսկ կարելի յե ջրել որը մեջ:

Ջրի քանակը հետևյալն է. շիթիլի աճման սկզբնական շրջանում 1 քառ. մետր տարածությանը տրվում է միջին հաշվով 2 լիտր ջուր, իսկ յերբ շիթիլներն աճել, ամրացել են, յերեկոյան հիմնական ջրման ժամանակ 1 ք. մետր տարածությանը տրվում է մինչև 4 լիտր ջուր:

**2. Քաղհանը.**—Ջերմոցներից ու մարգերից մոլախոտերը քաղելը թանգ նստող, բայց միանգամայն անհրաժեշտ աշխատանք է: Քաղհանը պետք է կատարել այն որերին, յերբ արևը ծածկված է ամպերով: Արև ու շոգ որերին քաղհանը պիտի կատարել մեծ զգուշությամբ, այն է՝ քաղհանելիք



ջերմոցներն ու մարգերը պետք է ջրել ու հենց վոր արևն սկսի խիստ տաքացնել, պետք է ծածկել խուփերով և պիտի բանալ ջերմոցների ու մարգերի միայն այն մասը, վոր պիտի քաղհանվի: Քաղհանված մասն առանց ջրելու նորից խուփերով պիտի ծածկել և անցնել մյուս մասերի քաղհանին: Ջրել կարելի յե միայն յերեկոյան դեմ, յերբ շիթիլներն ու հողը պաղել են: Առանց այսպիսի նախազգուշական միջոցների շոգ յեղանակներին քաղհանելը կարող է մեծ վնաս տալ շիթիլներին:

Այս աշխատանքը հեշտացնելու և էժանացնելու համար հարկավոր է առաջուց հոգ տանել, վոր շիթիլանոցի մեջ վորքան կարելի յե քիչ մոլախոտերի սերմեր ու արմատներ ընկնեն: Այդ կարելի յե անել մի քանի ձևով. գոմաղբ ցանելուց առաջ բահելով և ամառվա ընթացքում մոլախոտերը շիթիլանոցից վոչնչացնելով, վորի համար չպետք է թույլ տալ, վոր նրանք սերմակալեն, այլ պետք է ամառվա ընթացքում մի քանի անգամ հնձել: Այդ խոշոր խնայողություն կլինի հետագա քաղհանի գործում:

**3. Ստվեր գցելը և ընդհանրապես խուփերի գործածությունը.**—Խուփերն անհրաժեշտ են ամենից առաջ նոր բուսած շիթիլները ցրտերից և մանավանդ ուշ գարնան սառնամանիքներից պաշտպանելու համար: Խուփերը գործ են ածվում նաև կարկուտից, հորդ անձրևներից և արևի այրող ճառագայթներից պաշտպանելու համար: Ապակեպատ շրջանակները լավ են կուտակում արևի տաքությունը, սակայն միշտ էլ չեն պաշտպանում սառնամանիքներից, դրա համար էլ խիստ ցուրտ գիշերներին ջերմոցները պիտի ծածկել վորևէ լրացուցիչ ծածկոցով:

Ղամիշի և այլ ծածկոցները լավ են պաշտպանում ցրտերից, սակայն իրենց միջով չեն անցկացնում արևի տաք ճառագայթները:

Խսիրները լավ են պաշտպանում կարկուտից և մասամբ հորդ անձրևներից ու յերկարատև անձրևներից:

Քաթանի և այլ թեթև ծածկոցներն ավելի վատ են պաշտպանում հորդ անձրևներից կամ ցրտերից, սակայն որվա շոգ ժամանակ շատ լավ միջոց են ստվեր գցելու և արևի ճառագայթների ազդեցությունը թուլացնելու համար:

Ծխախոտի շիթիլ աճեցնելիս ստվեր գցելու վրա հատուկ ուշադրություն պիտի դարձնել, վորովհետև, յեթե այդ աշխատանքը խելացի ու ճիշտ կատարվի, կպակասեցնի ջրելու պահանջը և դրա հետ կապված աշխատանքն ու ծախսը, շոգ ու քամոտ որերին մատաղ շիթիլները կպաշտպանի չորացումից ու հիվանդությունների առաջը կառնի: Յերբ շիթիլը մի քիչ մեծանում է, արդեն ավելի հեշտ է դիմանում շոգին, վորովհետև նրա արմատները մտնում են խոնավ հողի խորքը, իսկ տերևներն արդեն ստվեր են գցում, ուստի և հողն այնքան էլ շատ չի տաքանում: Այդ ժամանակ շիթիլների վրա ստվեր գցել կարելի յե միայն որվա ամենաշոգ ժամանակը:

Ստվեր գցելը չափազանց անհրաժեշտ է, յերբ շոգ որերին չոր քամի յե փչում:

**4. Հող ավելացնելը.**—Հող ավելացնելու աշխատանքը պետք է կատարել քաղհանելուց և տնկելու համար շիթիլ քաղելուց հետո: Հող ավելացնելն առանձնապես կարևոր նշանակություն ունի շիթիլների արմատային սիստեմն ամրացնելու համար, կողարմատի մեծ քանակություն առաջացնելու համար, վորը հետագայում, շիթիլը դաշտ տեղափոխելուց հետո նպաստում է ավելի արագ արմատակալելուն: Բացի այդ, ավելացրած հողը բարելավում է շիթիլի սնունդը և արագացնում է նրա աճումը:

Հողի ավելացում կիրառվում է նաև շիթիլների հիվանդության դեպքում:

Հող ավելացնելու համար գործադրվում է նույն ջերմոցային խառնուրդը, ինչ վոր գործադրվում է ջերմոցների ու մարգերի վերին շերտի համար:

Հողի ավելացում կարելի յե կատարել շիթիլի աճման ամբողջ ընթացքում 3—4 անգամ:

Հողն ավիրացված է կամ ծծումբով չաղ տալով և կամ մոխի միջոցով, աշխատելով, որ համաչափ ու կանոնավոր ցանվի:

5. Պարարտացուցիչ ջրումը.—Ջերմոցների կամ մարգերի պարարտացումն ընդհանրապես անհրաժեշտ է, սակայն ավելի հաճախ պարարտացվում է այն դեպքերում, յերբ չիթիլն աճեցվում է փուխր ավազային հողում, կամ արդեն լվացված, հին հողերում:

Այդ նպատակով գործ են ածվում հետևյալ լուծույթները. սելիտրա (Չիլիական) կամ ծծմբաթթվային ամոնիում — 50 գրամը 1 դույլ ջրի հետ խառնելով, որով ջրում են 4 ք. մետր տարածություն: Կարելի յե գործադրել նաև հավի աղբ (ծերտ), հեղուկ դրությամբ: Դրա համար վերցնում են 13 դույլ ջրին 1 դույլ ծերտ, խառնում ու թողնում 1—2 շաբաթ, վորպեսզի ծերտը լուծվի ջրի մեջ (հաճախ պիտի խառնել, վորպեսզի շուտ լուծվի): Այդ լուծույթով ջրելիս պետք է ավելացնել նույնքան ջուր և ջրել ցերեկոյան կամ ամպամած օր:

Պարարտացուցիչ ջուրը պիտի սկսել տալ այն ժամանակ, յերբ չիթիլն արդեն տվել է յերրորդ տերևը (չհաշված առաջին յերկու սերմատերևները): Պարարտացուցիչ ջուր տալը պիտի դադարեցնել չիթիլները քաղելուց յերկու շաբաթ առաջ, հակառակ դեպքում չիթիլները չափազանց նուրբ և յերկարավուն կլինեն:

6. Չիթիլի ընտրությունը.—Չիթիլը քաղելուց մի շաբաթ առաջ պիտի նրանց այնպես խնամել, վոր աստիճանաբար վարժվեն խոնավության պակասության, քամիներին ու արևի ուժեղ լույսին, վոր կարելի յե անել ջրելը կրճատելով, գիշերները չծածկելով, պարարտացումը դադարեցնելով:

Տնկելու համար ամենահարմար չիթիլն է համարվում այն չիթիլը, վոր ունի 5—7 սանտիմետր ցողուն, 5—6 տերև, չհաշված առաջին 2 սերմատերևները: Աճման այդ շրջանում, յերբ չիթիլը ծաղում են, չի կտրվում:

Սովորաբար թե՛ ջերմոցներում և թե՛ մարգերում փոքր չիթիլներ իրենց աճումով ավելի առաջ են ընկնում մյուսներից: Այդ չիթիլներն ավելի շուտ պիտի քաղել և տնկել մեկ տեղ:

Չիթիլներն ընտրելուց առաջ ջերմոցները կամ մարգերը պետք է լավ ջրել, վորպեսզի հողը փափկանա և ավելի հեշտ լինի չիթիլներն արմատներով հանել: Չիթիլները քաղելիս պիտի ընտրել այնպիսիները, վորոնք լիովին պիտանի յեն տնկելու համար:

Չիթիլը քաղելու ամենահարմար ժամանակն առավոտն է, յերբ արևը դեռ չի սկսել ուժեղ տաքացնել և յերեկոն, յերբ ցերեկվա շոգն արդեն կոտրել է: Որվա մնացած ժամանակը չիթիլ քաղել կարելի յե միայն այն դեպքում, յեթե օրն ամպամած է: Սակայն, յեթե չափազանց անհրաժեշտ է շոգ յեղանակին չիթիլ քաղել, այդ դեպքում պետք է նախապես ստվեր գցել ջերմոցի կամ մարգի վրա:

Չիթիլը պոկելիս յերկու մատով բռնում են տերևներից ու քաշում, առանց ուժեղ ձիգ տալու և ապա, պոկած չիթիլները համրելով դարսում են մյուս ձեռքում, այնպես, վոր արմատները բռի մեջ լինեն: 50 հատ չիթիլ հավաքելուց հետո դաստայով դնում են ջերմոցի մոտ, մի ստվեր տեղ: Չիթիլը չի կարելի արևի տակ դնել, թեկուզ և վորևէ բանով ծածկած, վորովհետև այդ դեպքում նա շուտով թառամում է: Քաղված չիթիլները դարսվում է շարքերով և այդ դրությամբ նա առանց փչանալու կարող է դիմանալ 2 օր: Սակայն զամբյուղի կամ արկղի մեջ հավաքած չիթիլն այդքան չի դիմանա, կարող է տաքանալ: Յեթե չիթիլն արկղով կամ զամբյուղով է դաշտ փոխադրվելու, պետք է զամբյուղը կամ արկղը թրջել, հատակը ծածկել թարմ խոտով և չիթիլները նրա մեջ դարսել այնպես, վոր արմատները ներսի կողմը լինեն: Այս դրությամբ չիթիլը պիտի դաշտ փոխադրել առանց ուշացնելու:

Չիթիլը ճանապարհին կարող է մնալ մինչև 24 ժամ, առանց թարմացնելու համար տեղափոխություն կատարելու:

ՀՀ Ազգային գրադարան
NL0280448

18385